

Տարեկան գինը 10 լուրջի, կէս տարվան

Թիֆիխում գրվում են միմիայն խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Տիֆլիս. Պեդակցիա «Մշակ»  
Կամ Tiflis Rédaction «Mschak».

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆՆԻՆ

# “ԱՐԾՎԿ”

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրօգրամայով։ Մենք ստանում ենք սեփական Հեռագիրներ։  
«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլի է, վեց ամավանը 6 րուբլի։  
Գրիել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԴՐԱՏԱՆԼ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշելի տանը)։  
Կայորութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հացեով։ ՏԻՓԼԻՍ, Պետական գրադարան, Տիֆլիս, Rédaction du journal arménien «MSCHAK».

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարեգործութիւնը Անգլիայում.—Ներթիւն Տե-  
թիւն։ Թիֆլիսի արհեստաւորաց զիսաւորի  
որութիւնը. Նամակ Կարսից. Նամակ Խմբա-  
նն. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Որումի վաճառականութիւնը 1888 թւն. Նա-  
կ Թիւրքիայից. Արտաքին Լուրեր. —ՀԵՇԱԳԻՐ-  
Ի. —ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-  
ԱԿԱՆ. ԲԺՇԿԻ գրոյցները.

ԲԱՐԵՎՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՆԳԻՎՅՈՒՆ

Վերջին ժամանակները Անդլիայում մի որ շարժում է Նշմարվում՝ տգետ, չքար- և աշխատող դասակարգին բարեգոր- ութիւն անել ոչ թէ ողորմութիւն բա- անելով նրան, կամ հիւանդանոցներ և նկելանոցներ հիմնելով այդ դասակարգի ամար,—այլ ջանալով ազնւացնել այդ ասակարգը՝ մտաւորապէս զարգացնելով և արոյականացնելով ամբոխի մարդկանց; Դրա համար հիմնում են ստորին ժողո- ողի համար այնպիսի հաստատութիւն- ին ուղարկելու ամենահայտնի առաջնա- լուն:

որ, որտեղ ամբոխի երկու սեռի մարդիկ, կայ գէպի սաքրամբրութըւը, գէպի կեանքի նուրբ զգացմունքները, մի և նոյն ժամանակ միջոց տալով ամբոխի մարդկանց և կանանց ֆիզիկապէս և մոտաւորապէս ամեստ զուարծութիւններ, թէ սովորում զարգացնելու իրանց բօլոր ոյժերը և ձեռք բերելու բազմակողմանի հմտութիւններ և գործնական արհեստներ:

# ԲԱՆԱԿԱՐԵՎՈՒՄ

καὶ οὐδὲν τοῦτο περιέλθει στοιχεῖον τούτων, ἀλλὰ τούτη  
τοι γένεται τοποθεσία τοῦ περιβόλου τοῦ ναοῦ. Οὐ γάρ  
οὐδὲν τοῦτο περιέλθει στοιχεῖον τούτων, ἀλλὰ τοι γένεται  
τοποθεσία τοῦ περιβόλου τοῦ ναοῦ.

կը գուրկ լինելով արեգական ձառագայթներից՝  
պէտք է չընտրել։ Սկսեակը պէտք է լինի բար-  
ձր, օդանցք, վառարան կամ բաւխար ունենայ։  
Զմռո ժամանակ վառարանը կամ բաւխարը միշտ  
պէտք է վառ պահել օդի մաքրութեան համար։  
Ամառ ժամանակ լաւ եղանակին պատուհանները  
կարելի է ամբողջ օրը բաց թողնել և կամ եթէ  
այդ անյարմար է, կից սենեակի պատուհանները  
սառ պահել, իսկ ձմբոս սենեակի օրը տեսի հո-

# ՏԱՐԱՆԴԻ ԱՆԴՐԵԱՆԻ ՏԱՐԻ

# ՄԱԿԱՐ

Խմբագրութիւնը բաց է առաւելան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերից)

**Յայտարարութիւն** Ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 : օպէկ.

Գործնական, չոր ու ցամաք համարված  
անզլիական ժողովուրդը ամենեւին այնքան  
ևսական չէ, որքան կարծիում է ընդհան-  
րապէս. անզլիական ժողովուրդը գուցէ ա-  
ւելի իդէալիստ է, քան թէ որ և է ուրիշ  
ազգ աշխարհիս երեսին: Ո՞ր ազգի մէջ մի  
որ և է իդէալիստի ձեռքով զրված րօմանը  
կարող է մի քանի տարի լոյս տեսնելուց  
յետոյ՝ կեանքի մէջ իրականանալ և իդէա-  
լական, երեւակայական աշխարհից անցնել  
գործնական կեանքը, հոգի և մարմին ըն-  
դունել ժամանակակից կեանքի մէջ: Բայց  
Անզլիայում այդ պատահել է և այն էլ մի  
քանի տարի սրանից առաջ:

Աշունքին, 1882 թվին, Հրատարակվեց  
Անդիայում Վալտեր Բէզանտի բօմանը  
„All sorts and conditions of Men“  
(Ամեն տեսակի և ամեն դասակարգի մար-  
զիկ) վերնագրով, որտեղ հեղինակը այն  
միտքն է անցկացնում թէ ունեոր մարդիկ  
պէտք է մօտենան ամբոխի մարդկանց,  
միախառնվեն ժողովրդի հետ, իրանց ըն-  
կերութեամբ ազնւացնեն, մտաւորապէս  
զարգացնեն և բարոյականացնեն խաւար  
ամբոխի տգէտ և բարոյապէս ընկած մարդ-  
կանց: Տօմանի մէջ ներկայացրած է մի ե-  
րիտասարդ զոյգ, Անձելա և Հարբի, որոնք  
հիմնում են ամբոխի համար, Լօնդոնի աշ-  
քատ թագերից մինում մի ժողովրդական  
պալատ, որի մէջ ամբոխը թէ առողջ ու  
ազնիւ գուարծութիւններ կը վայելէ և թէ  
կազմվում, որը նուիրում է միլիօնաւոր  
գումարներ և իրագործում է բէզանտի ե-  
րազը, կառուցանելով Լօնդոնի ազքատ թա-  
գերից մինում, Ուատչէպում, մի ահազին  
„Ժողովրդական պալատ“ (People's Palace),  
այդ հիմնարկութեանը կատարելապէս այն  
կազմակերպութիւն տալով, որը զծագր-  
ված էր բէզանտի բօմանի մէջ:  
Տօմանի երեալու օրից հինգ տարուց  
յետոյ հանդիսաւոր կերպով բացվում էր  
„Ժողովրդական պալատը“, և Վիկտօրիա  
թագուհին, ներկայ գտնվելով այդ հսկա-  
յական հիմնարկութեան բացման, մտաւ  
գահին թէ թէկի տուած այն համեստ  
բօմանիստի հետ, որը այդ հրէշտաոր հաս-  
տատութեան իրագործմանը գաղափար էր  
տուել:

կը սովորէ արշնաստներ, կը լսէ երաժշտութիւն, երգ, կը ծանօթանայ նկարչութեան հետ, կը լսէ ընդհանուր զարգացոցիշ դասախոսութիւններ, կը զարգացնէ իր ֆիզիկական ոյժերը՝ մարմնամարզութեամբ, լող տալով և զանազան խաղերով։ Ընկերութեան հասակաւոր անդամները, բացի սրանից կը կազմակերպեն օրէկէստրներ, երգեցիկ խմբեր, իսկ ընկերութեան անշափահաս անդամների համար նոյն իսկ ընկերութեան մէջ կը հիմնվեն դպրոցներ։ Ամբոխի մարդուն բացի օգտաւէտ և զործնական արշնաստներ սովորեցնելուց, միջոց կը արզի և դուրս գալ իր շրջանից, պատրաստվել միջնակարգ և բարձրագոյն զըպրոցները մանելու համար, և այլն և այլն.... Վերջապէս Վալտէր Բէզանտի րօմանի մէջ յայտնված մտքերը այն աստիճանն երեւակայական էին, նրա զծագրված ծրագիրը այն աստիճան ընդհարձակ էր, որ ա-

բոգել օդանցքների միջով։ Անկողնակալը պէտք է պատռնանից հեռու տեղաւորել և այնպէս որ հիւանդին ամեն կողմից կարելի լինի մօտենալ։ Հիւանդի երեսը զէպի պատը պէտք է ուղղված լինի, որ պատռնանի լոյսը չը նեղացնէ հիւանդին։ Անկողինը աւելի նպատակայարմար է փափուկ խոռով լցնել, որ իրեն էժան սիրթ վերջը կարելի է այրել, հիւանդի յետքի տակ պէտք է կլէ օնկա փաել մաքրութիւնը պահպանելու համար։ Հիւանդի խնամակալները պէտք է մեծ ուշադրութիւն դարձնեն հիւանդի արտաթորութիւնների վրա, որոնք պէտք է ուղղակի ընդունվեն առանձին ամանների մէջ և որովհետեւ խօլերայով հիւանդի կղկղանքը և գուրս փսխված նիւթերը վարակիչ ախտածին սկզբունքներ են պարունակում, այդ պատճառով ամեն անգամ հիւանդի արտաթորութիւնները պէտք է դէղին փեկցիայի ենթարկել։ Դեղինփեկցիայի նպատակն է վարակիչ արտաթորութիւնների մէջ գտնված ախտածին միկրօբներին բնաջնջել, արմատախիլ անել։ Անպայման մաքրութիւն պահպանելով և խօլերային հիւանդների արտաթորութիւնները կանոնաւոր դէղինփեկցիային ենթարկելով, մենք կատարած կը լինենք այն ամենը, ինչ որ գիտութիւնը առաջարկում է մեզ, խօլերային համաձարակումի տարածումը սահմանափակելու համար։ Այս պարզաբանելու համար և այն հասարակ պատճառով, որ խօլերայի համաճարակումի ժամանակ արտաթորութիւնները դեղինփեկցիային ենթարկելու հարցը, առաջնակարգ հարցերից մէկը է, եթէ չասենք առաջնը Խօլերայի տարածման աղբիւրը և ճանապարհում գիտական գիտութիւնը պարզել է, մենք առաջվայ նման կուրօքն դէս ու դէս չենք ընկնում թշնամուն գիտաթափ անելու համար, այլ գիտակցաբար ուղղում ենք մեր զէնքերը ախտածին աղբիւրի դէմ—միկրօբների դէմ, որոնք միլիօնաւոր—անթիւ անհամար քանակութեամբ լվալում են խօլերայով հիւանդի արտաթորութիւնների մէջ և որոնց աճման ընդունակութիւնը աջող հանգամանքներին նայելով անազին է և աւերիչ Մենք գիտակցաբար պիտի կատարենք արտաթորութիւնների դէղին փեկցիան, ինչպէս որ գիտութիւնը մեզ առաջնորդում է։ Խօլերային համաճարակումները կորցրել են այժմ քաղաքակիրթ աղդերի մէջ իրանց սարսափելի տպաւորութիւնները։ Քաղաքակիրթ Անգլիան յենվելով թէ իր սանիտարական լուրջ օրէնքների վրա և թէ ժողովրդի ինքնաճանաչութեան վրա՝ հանդիսաւ և սառնութեամբ է նայում խօլերայի նման մի թափառական թշնամուն, նա բաց համարձակ ամենայն ժամանակ շարունակում է իր առևտուրը խօլերայի հայրենիքի—Հնդկաստանի հետ, քաջ համոզված լինելով որ





